

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՎԻՐԵԼ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

25.02.2015 15:37



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր փետրվարի 25-ին Փաստաբանների պալատի և ‘Փորձաքննությունների ազգային բյուրո’-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը ստորագրել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ‘Փորձաքննությունների ազգային բյուրո’-ի տնօրեն Արտաշես Զավադյանը:

Ստորագրման պաշտոնական արարողությունից հետո Փաստաբանների պալատի նախագահը ողջունել է համագործակցության նման ձևաչափը և նշել, որ այս համագործակցության շահառու են լինելու է հասարակությունը: **‘Վերջին շրջանում արդիական է դարձել հատուկ մասնագետների միջոցով ճշմարտությունը վեր հանելը և փաստաբաններին համար դա շատ կարևոր գործիք է’**, -նշել է Արա Զոհրաբյանը:

Նրա խոսքով Փորձաքննությունների ազգային բյուրոն տրամադրված է իրենց հնարավորությունները ի նպաստ դնել փաստաբաններին: Այսինքն փաստաբաններն էլ կկարողանան արտադատական կարգով փորձաքննությունների համար դիմել և ստանալ հետազոտությունների արդյունքներ, որը կհեշտացնի փաստաբանների աշխատանքը:

Արտաշես Զավադյանը կարևորելով Փաստաբանների պալատի հետ համագործակցությունը նշել է, -**‘մենք նույն խստությամբ, նույն գիտական հիմնավորվածությամբ ու նույն ռեժիմով կփորձենք աշխատել փաստաբանների հետ’**:

Կողմերը պայմանավորվել են համագործակցել նաև փաստաբանական դպրոցի հետ՝ ունկնդիրներին փորձաքննություններին առնչվող թեմաներով դասախոսություններ ներկայացնելու միջոցով:

Վերադառնալ \$(window).load(function() { if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })